ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

N «ՀԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/01» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ «25» հունվարի 2022թ. ժամը 15:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Բաբայան

Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Ղազարյան, Գ. Ավետիսյան, Ն. Սարգսյան, Հ. Մինասյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մնացականյան

1. **Տեղեկություն՝ «ՀԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/01» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման օրվա և ժամի մասին**

1.1 հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում հրապարակվելու օրվանից հաշված 8-րդ օրվա (21.01.2022թ.) ժամը 15:00-ին,

1.2 հայտերը բացվել են էլեկտրոնային համակարգի միջոցով,

1.3 էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող օրը՝ 24.01.2022թ., ժամը 15:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

2. **Տեղեկատվություն գնման հայտերով սահմանված՝ գնվելիք ապրանքների գնի վերաբերյալ**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտերով սահմանված սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գինը՝ մեկ թվով արտահայտված.

Չափաբաժնի համարը	Գնվելիք ապրանքի անվանումը	Գնման հայտով սահմանված գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)
1	Էլեկտրոնային նամակագրության անվտանգության համակարգ (Kaspersky Security for Mail Server)	440 000

2	Ամպային տեխնոլոգիաների վրա հիմնված բազմաֆունկցիոնալ վավերացման և մուտքի վերահսկման համակարգ	5 000 000

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

3. <u>Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և տվյալները</u>

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար «ՀԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/01» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

N	Մասնակիցների անվանումը	Գտնվելու վայրը և կապի միջոցները
1.	«Միկրորինգ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Սայաթ-Նովայի պող. 33/63 Հեռ. +374 10 52-94-21 Էլ.փոստ՝ info@microring.am
2.	«Իքս-Արթ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Սարյան 4-55 Հեռ. +374 60 27-27-51 Էլ.փոստ՝ contact@x-art.am

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

4. <u>Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ</u>

Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի համաձայն՝ մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը գնահատող հանձնաժողովի քարտուղարին հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

5. <u>Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ ստացված հարցումների և տրամադրված պատասխանների մասին</u>

Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, հետևաբար պատասխաններ չեն տրամադրվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

6. «ՀԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/01» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները՝

Չափաբաժին 1: Էլեկտրոնային նամակագրության անվտանգության համակարգ (Kaspersky Security for Mail Server)

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/			Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/		
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին
1	«Միկրորինգ» ՍՊԸ	360000	20 %	432000	318160	20 %	381792
2	«Իքս-Արթ» ՍՊԸ	328000	20 %	393600	321440	20 %	385728

Էլեկտրոնային հակադարձ աճուրդը ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 25.01.2022թ. և Համակարգի կողմից 1-ին չափաբաժնով առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ընտրվել «Միկրորինգ» ՍՊԸ-ն:

Չափաբաժին 2: Ամպային տեխնոլոգիաների վրա հիմնված բազմաֆունկցիոնալ վավերացման և մուտքի վերահսկման համակարգ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/			Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/		
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին
1	«Իքս-Արթ» ՍՊԸ	3960000	20 %	4752000	3960000	20 %	4752000

Էլեկտրոնային հակադարձ աճուրդը ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 25.01.2022թ. և Համակարգի կողմից 2-րդ չափաբաժնով առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ընտրվել «Իքս-Արթ» ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

7. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի /դիմում-հայտարարության/ առկայության մասին

«Միկրորինգ» ՍՊԸ-ի և «Իքս-Արթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) և իրական շահառուների մասին հայտարարագիրը (Հավելված 1.2):

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

8. Տվյալներ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխանության մասին

«Միկրորինգ» ՍՊԸ-ի և «Իքս-Արթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա է էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1), իրական շահառուների մասին հայտարարագիրը (Հավելված 1.2) և Համակարգում մուտքագրած (լրացրած) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

9. Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց «Միկրորինգ» ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից 1-ին չափաբաժնով և «Իքս-Արթ» ՍՊԸ-ին 2-րդ չափաբաժնով:
2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն 1-ին չափաբաժնի համար անգործության ժամկետ է սահմանվում 10 օրացուցային օր:
3. Պայմանագիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակցին ծանուցել Պայմանագրի նախագիծը և առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում կնքվելիք պայմանագրի 10 (տասը) տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ ներկայացրած գնային առաջարկի 15 (տասնհինգ) տոկոսի չափով, ինչպես նաև ստորագրել և ուղարկել, որը ներկայացնելուց հետո սահմանված կարգով կկնքվի պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Վ. Բաբայան

Անդամներ՝ _____ Գ. Ղազարյան

_____ Գ. Ավետիսյան

_____ Ն. Սարգսյան

_____ Հ. Մինասյան

Քարտուղար՝ _____ Ա. Մնացականյան